



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«ԱՐԽԱՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ Ժ/Պ»

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«25» 04 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 44

Ձեռնարկողը՝

<<Մեծ Մասրենի>> ՍՊԸ

ՀՀ Կոտայքի մարզ Պտոշյան ավան

Գործունեությունը՝

**Ոսկեդաշտի համայնքի /բնակավայրի/ պարզեցված գլխավոր
հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվեկտրություն**

«Արարաբի մարզ»

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

քիվ ԲՓ 44

«25» 04 2018թ.

ՀՀ Արարատի մարզի Ոսկետափ համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝ <<Մեծ Մասրենի>> ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝ Հիմնադրության փաստաթուղթ

ՀՀ Արարատի մարզի Ոսկետափ համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծը՝ համատեղված համայնքի կառուցապատված և կառուցապատման ենթակա տարածքների գոտևորման նախագծի հետ, մշակվել է «Մեծ Մասրենի» ՍՊԸ-ում, ՀՀ Արարատի մարզի Ոսկետափ համայնքի պատվերով (Պայմանագիր N ՀՀ ԱՄՈՀ – ԳՀԱՇՁԲ-17/2):

Ոսկետափ համայնքը գտնվում է Արարատի մարզի հարավ-արևելյան հատվածում՝ Վեդի քաղաքից 6-7կմ, իսկ մարզկենտրոն ք. Արտաշատից 10կմ հեռավորության վրա: Այն հարակից է Վանաշեն, Այգավան, Լուսառատ և Արալեզ համայնքներին: Բնակավայրը գտնվում է ծովի մակարդակից 820-850մ. բացարձակ նիշերով տեղանքի վրա:

Համայնքը միջպետական նշանակության ավտոճանապարհներով կապված է Երևան և Մեղրի քաղաքների, ինչպես նաև երկաթգծով Երասխ համայնքի հետ:

Ոսկետափ համայնքում ներկայումս բնակվում է 5154 մարդ, հեռանկարում՝ 5412 մարդ:

Շրջանի կլիման չոր է և խիստ ցամաքային, (ամռանը մինչև +42°C, իսկ ձմռանը -10°C): Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 300մմ:

Բնակավայրի տարածքի կառուցապատումը ներկայացված է բնակելի կառուցապատմամբ, հասարակական սպասարկման օբյեկտների կենտրոնացած տեղակայմամբ:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1196.08հա: Համայնքի հողերից 914.14հա ներկայումս ունի գյուղատնտեսական նշանակություն, հեռանկարում կլինի 908.58հա: Բնակավայրերի հողերը կազմում են 228.24հա, հեռանկարում՝ 235.79հա, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերը՝ 16.40հա, հեռանկարում՝ 16.40հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողերը՝ 25.05հա, հեռանկարում՝ 23.06հա, ջրային հողեր՝ 12.25 հեռանկարում 12.25:



Տարածաշրջանը հիմնականում գյուղատնտեսական է, զարգացած այգեգործությամբ, խաղողագործությամբ, և բանջարաբուծությամբ:

Ոսկետափ համայնքի բնակելի տարածքները նախատեսված են հիմնականում բնակելի կառուցապատման, դրանց ենթակառուցվածքների, հասարակական նշանակության օբյեկտների առաջնային տեղակայման համար: Անհատական բնակելի կառուցապատման համար նախատեսված գոտիներում հողամասերի չափերը սահմանվում են՝ նվազագույնը 1000- 2000քմ, հողամասերով՝ պարագծային կառուցապատմամբ, 1-2 հարկանի քարե պատերով, ավանդական շարվածքով, ուղիղ շարվածքի տուֆ քարերով, թիթեղյա կամ ասբոշիֆերի ծածկ ունեցող տներով: Կառուցապատման գիծը, հիմնականում պահպանված է և սահմանված փողոցների կարմիր գծից մոտ 3մ հեռավորությամբ: Փողոցային ցանցը ներկայացված է գլխավորապես 8մ. լայնությամբ կանոնվոր փողոցային ցանցով: Համայնքի կենտրոնական հատվածում, փողոցների երկու կողմերում առկա են 1-1.5մ լայնությամբ մայթեր: Համայնքը ունի որոշակիորեն ձևավորված հասարակական կենտրոն, որտեղ Երևանյան խճուղու հարակից տարածքներում կենտրոնացված են վարչական բնույթի օբյեկտներ՝ համայնքապետարանի երկու հարկանի կառույցը, որտեղ գտնվում է բուժ. ամբուլատորիան, ավագ դպրոցի շենքը, որտեղ հաճախում են 400 աշակերտ, մշակույթի տան շենքը, մանկապարտեզը և մի շարք առևտրի շենքեր: Համայնքում գործում են մի շարք գյուղ. արտադրական օբյեկտներ: Ոսկետափ համայնքն ունի նաև հիմնական դպրոց, որտեղ հաճախում են 600 աշակերտ:

Ոսկետափ համայնքի ջրամատակարարման համակարգը սնվում է Սիսավան համայնքի տարածքում գոյություն ունեցող $W=2*200մ^3$ օրվա կարգավորման ջրամբարներից: Ջրամբարները նախատեսված են հարակից մի քանի բնակավայրերի համար: Ջրամատակարարման բաշխիչ ցանցը սպասարկում է /Վեոլիա Ջուրե/ ՓԲԸ կողմից: 2013-2014 թվականներին կատարվել է ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքներ, որի արդյունքում ջրագծերն ամբողջությամբ վերակառուցվել են:

Նախատեսվում է հեռանկարում՝ խմելու ջրագծերի վերակառուցում և կառուցում պոլիէթիլենե խողովակներով:

Ջրամատակարարման համակարգի կենտրոնացումը մեկ ջրատարով՝ կենցաղային, արտադրական և հակահրդեհային ջրապահանջների իրականացման համար:

Ջրապահանջը հաշվարկելիս, որպես հիմք ընդունվել է գործող ՇՆևԿ 2.04.02-84*-ը: Բնակչության մեկ մարդու օրական ջրապահանջը հաշվարկային տարում ընդունվում է 200լ/օր:

Ոսկետափ համայնքը չունի կոյուղու համակարգ և յուրաքանչյուրը անհատապես ինքն է լուծում իր խնդիրները: Կոյուղացման նման եղանակը լուրջ վտանգ է պարունակում շրջապատի սանիտարական վիճակի համար; Հեռանկարում նախատեսվում է կենցաղային կոյուղու նոր ցանցերի կառուցում, որտեղ կոյուղաջրերը նախատեսվում է հավաքել բնակավայրի արևմտյան մասում, որտեղ կկատարվի կոյուղաջրերի մաքրում: Մաքրման կառուցվածքներից հետո նախատեսվում է մոտ 5.2կմ երկարությամբ կոլեկտորով՝ մղման եղանակով, ջրերը հեռացնել դեպի Արաքս գետ: Կոյուղու համակարգը բարելավելու և շրջակա միջավայրի սանիտարա-հիգիենիկ վիճակը ապահովելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ միջոցառումները՝

- Կենցաղային կոյուղու բակային և փողոցային ցանցի կառուցում.
- Կենցաղային կոյուղաջրերի մաքրման կայանի կառուցում.
- Սելավային ջրերի բակային և փողոցային ցանցի կառուցում.
- Մղման պոմպակայանի կառուցում:



Ներկայումս Ոսկետափ համայնքը հեղեղատար կոյուղի չունի: Անձրևաջրերը անկանոն ձևով առանց մաքրման հեռացվում են ըստ ռելիեֆի:

Համայնքի ռելիեֆը հնարավորություն է տալիս հեղեղատար ջրեր գետ լցվելուց առաջ պետք է անցնեն համապատասխան մեխանիկական մաքրում: Համաձայն ՇՆևԿ 2.04.03-85-ի կետ 1.2 առաջացող ջրերի տարեկան ելքի շուրջ 70%-ը ենթակա է մաքրման:

Հեղեղատար կոյուղին պետք է ընդգրկի գյուղական համայնքի ամբողջ տարածքը և համայնքը շրջապատող ամբողջ ջրահավաք ավազանը: Կոյուղու ընդհանուր երկարությունը կկազմի 26.4կմ: Հեղեղատար ցանցերը կախված թաղամասերի նշանակությունից և ճարտարապետական որոշումներից կարող են լինել բաց առվակների կամ փակ խողովակաշարերի ձևով:

Հեղեղատար կոյուղու համար կարող են օգտագործվել կերամիկական, ե/բետոնե թուջե Փ200-500 խողովակներ և ե/բ կիսախողովակներ:

Ոսկետափ համայնքի տնամերձ հողամասերի ոռոգումը իրականացվում է Արտաշատի ջրանցքից, ինչպես նաև խորքային հորերից: Դրանց մի մասը ապահովում են մեխանիկական եղանակով, մյուսը՝ արտեզյան: Հեռանկարում նախատեսվում է ոռոգման ցանցի վերանորոգում:

Ոռոգման համակարգում նախատեսվող կարևոր միջոցառումներն են.

- 1) Ոռոգման համակարգերի պահպանում, շահագործում և գույքագրում:
- 2) Զրոգտագործողների համակարգի վերջնական ձևավորում, ինքնահոս ջրամատակարարման ընդլայնում, էներգետիկ ծախսերի կրճատում, ջուր մատակարարող և օգտագործող փոխհարաբերությունների բարելավում:
- 3) Զրամբարների կառուցում, համայնքում ոռոգման ջրերի վերաբերյալ առկա խնդիրների վերանայում և լուծման ժամանակացույցի կազմում:

Ոսկետափ համայնքի էներգամատակարարման գլխավոր սնուցող ենթակայանը 4000 կվա հզորությամբ 35/6կվ լարման Վեդի քաղաքի ենթակայան է: Այդ ենթակայանի ՍՊԳ-ի տարածքում նախատեսված չեն բնակելի, հասարակական, ուսումնական, բուժական հաստատություններ: Բնակավայրի տարածքում գործում են 10/0.4կվ լարման 4 (մեկտրանսֆորմատորային) ենթակայան, որոնց գումարային հզորությունը կազմում է 1600 ԿՎԱ: Էլեկտրաէներգիայի տարեկան գումարային ծախսը 3050 հազ. կվտ/ժ, որից կոմունալ կենցաղային կարիքների համար՝ 2500 հազ. կվտ/ժ, արտադրական կարիքների համար՝ 550 հազ. կվտ/ժ: 10 կվ էլեկտրահաղորդման օդային գծերի երկարությունը 6.5կմ. է, մալուխային գծերի երկարությունը՝ 0.04: Համաձայն մեթոդակարգի, էլեկտրամագնիսական ճառագայթման վեր նշված աղբյուրները համարվում են սակավազոր և չեն դիտարկվում որպես մթնոլորտի աղտոտման աղբյուրներ: Հեռանկարում նախատեսվում է էլեկտրամատակարարման ցանցի արդիականացում, հին փայտյա հենասյուների փոխարինումը նորերով, այլընտրանքային էներգետիկայի կայացում և զարգացում

Ոսկետափ համայնքի ներկայումս գազաֆիկացված է 90%-ով: Համայնքը բարձր ճնշման գազ ստանում է Այգավան համայնքից եկող Փ150մմ ք/6 գազատարից: Համայնքի գազամատակարարման համակարգը երկաստիճան է: Միջին ճնշման գազատարից գազը մտնում է գազաբաշխիչ կայան, որտեղ ստացվող ցածր ճնշման գազը խողովակներով մատակարարվում է բնակչությանը կենցաղային և օբյեկտների կարիքների բավարարման համար:

Սույն գլխավոր հատակագծով նախատեսվում է, որ հեռանկարում բնական գազով պետք է ապահովվի բոլոր բնակելի և հասարակական նշանակության շենքերը:



Անհատական բնակելի տների ջեռուցումը նախատեսվում է իրականացնել անհատական բնակարանային կաթսաներով կամ գազի վառարաններով, իսկ տաք ջրամատակարարման և սննդի պատրաստման կարիքներն ապահովելու համար բնակարաններում տեղադրվում են գազասալիկներ և գազի ջրատաքացուցիչներ:

Կուլտուր-կենցաղային, հասարակական շենքերի ջեռուցումը և տաք ջրամատակարարումը կարող է իրականացվել կենտրոնացված եղանակով կցակառույց, ինչպես նաև գոյություն ունեցող կաթսայատներից:

Համայնքի հեռանկարային զարգացման համար նախատեսված տները կունենան տեղական ջեռուցում և տաք ջրամատակարարում:

Ներկա դրությամբ Ոսկետափ համայնքում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկներ (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) գոյություն չունեն: Նախագծով համայնքի կենտրոնական հատվածում նախատեսվում է կանաչ գոտի զբոսայգի կազմակերպելու նպատակով: Բնակչության սեփական տարածքներում աճեցվում են բանջարանոցային, պտղատու մշակաբույսեր և ծաղիկներ, դրա շնորհիվ մեծ տեղ են զբաղեցնում սահմանափակ նշանակության կանաչ տարածքները:

Ոսկետափ համայնքի կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել գործողությունների համալիր ծրագիր.

- Նոր տարածքների կանաչապատման իրականացում, հստակ նախագծերին և ծրագրերին համապատասխան, ապահովելով հետագա ոռոգումը:

- Բոլոր տիպի հասարակական կառույցների տարածքների կանաչապատում և բարեկարգում:

Ոսկետափ համայնքն ունի մեկ գերեզմանատուն, որը 4.91հա մակերեսով, գտնվում է բնակավայրից դուրս համայնքի հյուսիս-արևմտյան հատվածում և առաջիկա 15 տարիների ընթացքում այդ տարածքը բավարար է բնակչության աճի համաձայն: Նախատեսվում է գործող գերեզմանոցը պարիսպապատել: Գերեզմանատների համար ՍՊԳ-ն ընդունված է 300մ:

Ոսկետափ համայնքն աղբահանության կազմակերպման համար ունի պայմանագիր «Մաքուր երկիր» ՍՊԸ-ի հետ, որը իր հերթին կանոնավոր կերպով՝ շաբաթ մեկ անգամ հավաքված աղբը տեղափոխում է Վեդի քաղաքի աղբավայրը: Հեռանկարում նախատեսվում է համայնքում տեղադրել աղբի համար նախատեսված աղբարկղեր:

Ոսկետափ համայնքի մթնոլորտի աղտոտման հիմնական աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը, ջեռուցման ժամանակահատվածում օգտագործվող վառարանները, սակայն դրանց արտանետումների աղտոտվածության մակարդակները չեն գերազանցում սահմանված նորմերը:

Ոսկետափ համայնքապետարանում տեղի են ունեցել <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքով սահմանված հանրային քննարկումները, որոնց ընթացքում հնչած առաջարկությունները հաշվի են առնվել նախագծի լրամշակումների ընթացքում և հանրության կողմից հավանություն է արժանացել: Հատկապես լուծված են կեղտաջրերի մաքրման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, աղմուկի մակարդակի նվազեցման և կանաչապատման հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Ընդհանուր առմամբ հեռանկարային զարգացման ընթացքում գլխավոր հատկապես նախատեսված միջոցառումների արդյունքում Ոսկետափ համայնքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմայի սահմաններում:



Փորձաքննական պահանջ

Հիմնադրությամբ փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մեծ Մասրենի» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Ոսկետափ համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Հ. Մեսրոպյան